ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N------Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն՝ «Լոկալ Դիվելոփըրզ» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Պուշկինի փողոցի հ.38 հասցեում գտնվող 3839.4քմ մակերեսով հողամասից 165.54քմ մակերեսով հատվածը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.07.2010թ. հ. 2693293 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող կից հատվածներում գտնվող 165.54 քմ/120.18քմ+45.36քմ/ մակերեսով համարժեք հողամասերի հետ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է սեփականության իրավունքով (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 22.07.2010թ. հ.2693293 վկայական) «Լոկալ Դիվելոփըրզ» ՓԲԸ-ին պատկանող՝ Պուշկինի փողոցի հ.38 հասցեում գտնվող սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող 3939.4 քմ մակերեսով հողամասից 165.54քմ մակերեսով հողամասը փոխանակել կից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 165.54քմ/120.18քմ+45.36քմ/ մակերեսով համարժեք հողամասերի հետ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի հ.347-Ն որոշման համաձայն՝ նշված տարածքում իրականացվող քաղաքաշինական ծրագրերի իրականացման նկատմամբ ճանաչվել է բացառիկ գերակա հանրային շահ և նշված տարածքների ձեռք բերող է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս «Լոկալ Դիվելոփըրզ» ՓԲԸ-ի:

Նշված հատվածում քաղաքաշինական ծրագրերն արդյունավետ կազմակերպելու, հողամասերի մասնատվածությունը և սեպաձևությունը վերացնելու, հողամասերը միավորելու և մեկ միասնական հատակագիծ թողարկելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել «Լոկալ Դիվելոփըրզ» ՓԲԸ-ին Պուշկինի փողոցի հ.38 հասցեում սեփականության իրավունքով պատկանող հողամասի մի մասը փոխանակել կից տարածքում գտնվող նույն մակերեսով հողամասի հետ:

Փոխանակվող 164.54քմ մակերեսներով հողամասերը համարժեք են, համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2) և 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չեն նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման սխեմայի գտնվում են 1-րդ գոտում, /ծածկագրեր 01-006-422-001-039 և 01-006-422-001/:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ